



Համար N 1158-Ն

Տիպ Որոշում

Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2024.07.22-

2024.08.04 Պաշտոնական

հրապարակման օրը 25.07.2024

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ փոխվարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 04.08.2024

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 25.07.2024

Ստորագրման ամսաթիվը 25.07.2024

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 1158-Ն

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 91.1-ին հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- Սահմանել հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզներին ներկայացվող պահանջները և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Երևան

Տ. Խաչատրյան

25.07.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

հուլիսի 25-ի N 1158-Ն որոշման

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները մշակվում են յուրաքանչյուր ջրավազանային տարածքի կամ առանձին գետավազանի կամ դրա առանձին հատվածի կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անդրասահմանային գետավազանի հատվածի համար և սահմանվում են ջրավազանային կառավարման պլաններում:

2. Հեղեղումների վտանգների քարտեզները և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները, ինչպես նաև այդ քարտեզներից բխող եզրահանգումները հանդիսանում են ջրերի վնասակար ներգործության ռիսկերի կառավարման պլանների հիմնական բաղադրիչները:

3. Հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզների մշակման համար պետք է իրականացվի նախնական ռիսկի գնահատում՝ հեղեղումների առաջացման հավանական ռիսկերը բացահայտելու և ռիսկային տարածքները սահմանելու համար:

4. Նախնական ռիսկի գնահատումն իրականացվում է՝ հիմնվելով առկա տեղեկատվության վրա, ինչպիսին են երկարաժամկետ զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունները, մասնավորապես, կլիմայի փոփոխության ազդեցությունը հեղեղումների առաջացման վրա: Գնահատման հիման վրա կազմվում են գետավազանային տարածքների քարտեզներ՝ համապատասխան մասշտաբով, որոնք ընդգրկում են գետավազանի և ենթավազանի սահմանները և ավիամերձ տարածքները՝ ներկայացնելով տեղագրությունը և հողօգտագործումը, անցյալում տեղի ունեցած և մարդկանց առողջության, շրջակա միջավայրի, մշակութային արժեքների և տնտեսական գործունեության վրա բացասական հետևանքներ ունեցած հեղեղումների, ինչպես նաև այն տարածքների նկարագրությունը, որտեղ սպազայում նմանատիպ երևույթների հավանականություն կա՝ ներառելով դրանց հեղեղման ծավալները և տարածման արեալները կամ գոտիները, բացասական հետևանքների գնահատումը:

5. Հեղեղումների վտանգների քարտեզները պետք է ընդգրկեն այն աշխարհագրական տարածքները, որոնք կարող են ենթարկվել հեղեղումների՝ համաձայն հետևյալ սցենարների՝

- 1) առաջացման ցածր հավանականության հեղեղումներ.
- 2) առաջացման միջին հավանականության հեղեղումներ.
- 3) առաջացման մեծ հավանականություն ունեցող հեղեղումներ:

6. Սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված յուրաքանչյուր սցենարի համար հեղեղումների վտանգների քարտեզները պետք է պատկերեն հետևյալ բաղադրիչները՝

- 1) հեղեղման մակերեսները.
- 2) ջրի խորությունները կամ ջրի մակարդակը.
- 3) ջրի հոսքի արագությունը:

7. Անդրասահմանային գետավազանի այն հատվածները, որտեղ առկա է պատշաճ մակարդակի պաշտպանություն, հեղեղումների վտանգների քարտեզները պետք է սահմանափակվեն սույն հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված սցենարով:

8. Հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները պետք է արտացոլեն հեղեղումների հնարավոր բացասական հետևանքներն ըստ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված հեղեղումների սցենարների և ներառեն՝

1) հնարավոր ազդեցության ենթարկվող բնակավայրերը, դրանց բնակչության (տարեցներ, կանայք, երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք) թվաքանակը, ենթակառուցվածքները (ճանապարհ, էլեկտրաէներգիա, գազ, կապ) և հիդրոտեխնիկական կառույցները.

- 2) հնարավոր ազդեցության ենթարկվող տարածքի տնտեսական գործունեության տեսակը.
- 3) հեղեղման դեպքում աղտոտում առաջացնող կառույցները և հնարավոր ազդեցության ենթարկվող պահպանվող տարածքները.

4) այն տարածքները, որտեղ տեղափոխված նստվածքների և աղբի բարձր պարունակություն կա, ինչպես նաև աղտոտման այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն:

9. Քարտեզների բովանդակությունն արտահայտվում է քարտեզագրական նշանների միջոցով: Քարտեզները պետք է ներառեն քարտեզի անվանումը, կողմնացույցի նշանը, մասշտաբի թվային արժեքը, մասշտաբային քանոնը և պայմանանշաններ:

10. Քարտեզները պետք է ներառեն թվային շերտեր իրենց տվյալների բազայով: Քարտեզների վրա պատկերվում են՝

- 1) հիմքի կետերը (պետական գեոդեզիական ցանցի, հանութային ցանցի, արբանյակային դիրքորոշման կետեր, նիվելիրային հենանիշներ).
- 2) ջրագրությունը (լճեր, ջրամբարներ, գետեր, գետակներ, ջրանցքներ, առվակներ, ջրհորներ, աղբյուրներ, ավիամերձ գոտիներ) և հիդրոտեխնիկական կառույցները.
- 3) բնակավայրերը և առանձին շենքերն ու շինությունները, ենթակառուցվածքները (էլեկտրաէներգիա, գազ, կապ).
- 4) արդյունաբերական, գյուղատնտեսական և կենցաղ-մշակութային օբյեկտները.
- 5) ճանապարհային ցանցը (երկաթուղային, խճուղային և գրունտային ճանապարհներ, արահետներ) և ճանապարհային ենթակառուցվածքները.

6) ռելիեֆը և Բարձրությունների իզոգծերը, ռելիեֆի թվային մոդելը.

7) բուսական ծածկը.

8) հողատեսքերը:

11. Սույն հավելվածի 12-րդ կետում նշված օբյեկտները քարտեզների վրա տրվում են ամբողջ ծավալով, իսկ անհրաժեշտության դեպքում օբյեկտների պատկերներին կից տրվում են անվանումներ, պարզաբանող մակագրություններ և որակական ու քանակական բնութագրիչներ:

12. Անդրաահմանային գետավազանային հատվածների համար հեղեղումների վտանգների քարտեզների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզների մշակմանը պետք է նախորդի տեղեկատվության փոխանակումը համապատասխան հարևան երկրների միջև, ինչպես նաև պետք է իրականացվեն քարտեզների թարմացման շարունակական աշխատանքներ:

13. Հեղեղումների ռիսկի նախնական գնահատման արդյունքները, հեղեղումների վտանգների քարտեզները, հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները և ջրերի վնասակար ներգործության ռիսկերի կառավարման պլանները պետք է լինեն հանրությանը հասանելի:

14. Հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները պետք է ինտեգրվեն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի մաս կազմող ազգային գեոպորտալին:

15. Հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները պետք է վերանայվեն վեց տարին մեկ ջրավազանային կառավարման պլանների վերանայումների հետ համակարգված՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության հավանական ազդեցությունը հեղեղումների առաջացման վրա:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ**

Ա. Խաչատրյան

25.07.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 25 հուլիսի 2024 թվական: